ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ (2002-2012 ԹԹ.)

Է 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտականղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր Ա.Գ. Ավագյան

Պաշտոնականընդդիմախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Վ. Ա. Բայբուրդյան,
պատմական գիտությունների թեկնածու
Վ.Հ. Տեր-Մաթևոսյան

Առաջատարկազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2013 թ. հունիսի 13-ին, ժամը15.00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ռ.Պ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

1923 թ. Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո պետության արտաքին քաղաքականությունը հիմնվում էր արևմտականության ու ստատուս քվոյի պահպանման սկզբունքների վրա: Թուրքիան մոտ ութ տասնամյակ վարում էր ակտիվ քաղաքականություն Արևմուտքին տնտեսապես ու քաղաքականապես ինտեգրվելու ուղղությամբ:

Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման առաջին տասնամյակն (2002-2012 թթ.) առանցքային նշանակություն ունեցավ Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության համար:

Իսլամամետ «Ազգային տեսակետ» շարժումից սերող ԱԶԿ-ն 2002-2004 թթ. մեծաթիվ բարենորոգումներ իրականացրեց ԵՄ-ի հետ Թուրքիայի օրենսդրության համապատասխանեցման ուղղությամբ: 2004 թ. դեկտեմբերին Բրյուսելում Եվրոպական խորհուրդը որոշեց, որ Թուրքիան բավարար առաջընթաց է գրանցել անդամակցության բանակցություններ սկսելու համար, որի մեկնարկը տրվեց 2005 թ. հոկտեմբերին: Սակայն հետագա հնգամյակի ընթացքում Թուրքիան վերահիմաստավորեց և որոշ շտկումներ մտցրեց արտաքին քաղաքական ուղղությունները բազմազանեցնելու ուղղությամբ: Թուրքիայի ակտիվությունը հատկապես դրսևորվեց Մերձավոր Արևելքում, ուր նրա ներգրավվածությունը, առաջնորդ դառնալու ուղղությամբ քայլերը առաջ բերեցին քննարկումներ առանցքի շեղման վերաբերյալ: Թուրքիան նաև քայլեր ձեռնարկեց ակտիվանալու հեռավոր տարածաշրջաններում, ինչպիսիք են Հարավային և Արևելյան Ասիան, Աֆրիկան ու Լատինական Ամերիկան:

ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակի արտաքին քաղաքականության ուսումնասիրությունն արդիական նշանակություն ունի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԶԿ-ը շարունակում է մնալ իշխող ուժը Թուրքիայում: Թուրքիայի իշխող կուսակցության արտաքին քաղաքականությունից զգալիորեն կապված են Մերձավոր Արևելքի ու այլ հարակից տարածաշրջանների, այդ թվում Հարավային Կովկասի զարգացումները: Տարածաշրջանային առաջնորդ դառնալու Թուրքիայի քաղաքականությունը մի շարք կարևոր զարգացումների պատճառ է հանդիսանում:

ԱԶԿ-ի կառավարման տասնամյակում Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը կարևոր է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական գծի մշակման համար: Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր առաջին անգամ ԱԶԿ-ի կառավարման շրջանում պաշտոնական Անկարան քայլեր

կատարեց Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, որոնց արդյունքում Թուրքիայի նախագահը պատմության մեջ առաջին անգամ այցելեց Հայաստան, ապա և ստորագրվեցին արձանագրությունները դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և հարաբերություններ զարգացնելու մասին:Բացի այդ, ԱԶԿ-ի կառավարման տասնամյակում ինստիտուցիոնալացված թուրք-ադրբեջանական ռազմա-քաղաքական դաշինքն անմիջական և առաջնային ազդեցություն ունի ՀՀ-ի և ԼՂՀ-ի ազգային անվտանգության համակարգի ձևավորման վրա:

Ատենախոսության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն էուսումնասիրել ու վերլուծել Արդարություն և զարգացում կուսակցության կառավարման առաջին տասնամյակում (2002-2012 թթ.) Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները: Այդ նպատակի համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

-Բացահայտել արտաքին քաղաքականության մեջ փոփոխությունների հիմնական պատճառները,

- Վերլուծել ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության գաղափարական հիմքերը,

-Ներկայացնել ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները,

-Ներկայացնել հիմնական ուղղություններով Թուրքիայի արտաքին քաղաքականության փոփոխությունները ԱԶԿ-ի կառավարման տասնամյակում,

-Ներկայացնել Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր ուղղություններն ու նախաձեռնությունները Հարավային ու Արևելյան Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսությունը առաջին փորձն է Համալիր ու բազմակողմանի գիտական ուսումնասիրության ենթարկել ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակում Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել է պատմահամեմատական մեթոդը, արտաքին քաղաքականության

վերլուծության բանական ընտրության տեսությունը, բյուրոկրատական քաղաքականության մոդելը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ժամանակագրական առումով ատենախոսությունը ընդգրկում է ԱԶԿ-ի իշխանության կառավարման տասնամյակը (2002-2012 թթ.): Մի շարք խնդիրների լուսաբանման անհրաժեշտությունից ելնելով՝ ատենախոսությունում ակնարկներ են արվում մինչև ԱԶԿ-ի կառավարումը Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության վրա:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Գիտականից բացի ատենախոսությունն կարող է ունենալ գործնական նշանակություն ՀՀ-ի արտաքին քաղաքականությամբ զբաղվող մասնագետների համար: Ատենախոսության մեջ արված եզրակացությունները կարող են օգտակար լինել հայ-թուրքական գործընթացում Թուրքիայի նախաձեռնության դրդապատճառները բացահայտելու ու հետագա կանխատեսումներ անելու համար:

Աշխատանքի փորձաքննությունը

Աշխատանքի հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնում:

Օգտագործված գրականության համառոտ տեսություն

Ատենախոսության մեջ օգտագործված սկզբնաղբյուրներն են Թուրքիա-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերը[1], ԱԶԿ-ի ծրագիրը[2] ու կուսակցության <<Թիրախ 2023>> տեսլականը[3], որոնց ուսումնասիրությունը կարևոր է պաշտոնական դիրքորոշման և ԱԶԿ-ի տեսլականը հասկանալու տեսանկյունից: Ատենախոսության արժեքավոր աղբյուրներից են ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության գաղափարախոս համարվող ԱԳ նախարար Ա. Դավութօղլուի[4] աշխատությունները:

---

[1] Turkey-EU Negotiating Framework, http://www.abgs.gov.tr/index.php?p=123&l=2.

[2] AK Parti Programı, http://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum6.

[3]<<Hedef 2023>> siyasi vizyonu, http://www.akparti.org.tr/beyanname2011.pdf.

[4]**Davutoğlu A.** Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, 2003, İstanbul, <<Küre Yayınları>>, **Davutoglu A.,**AlternativeParadigms: The Impact of Islamic and Western

Թուրքիայի քաղաքական համակարգում իսլամամետ ուժերի ուսումնասիրության համար օգտակար են թուրք հեղինակների գիտական ուսումնասիրությունները: Այդ տեսակետից մենք կարևորում ենք Հ. Յավուզի[5], աշխատությունը, որը վերաբերվում է իսլամամետ ուժերի էվոլյուցիային ու ԱԶԿ-ի ձևավորմանը: Պատմաբան, քաղաքագետ Թ.Զ. Թունայայի[6] աշխատությունը կարևոր է իսլամամետ շարժումների ծագումն ու գործունեությունը նախքան 1960 թ. հեղաշրջումը հասկանալու տեսանկյունից: Դ. Դումանի[7] աշխատությունը մանրամասն շարադրում է բազմակուսակցական համակարգի հաստատումից մինչև իսլամամետ Բարօրություն կուսակցության իշխանությունն ընկած ժամանակահատվածը:

ԱԶԿ-ի իշխանության տարիների համալիր ներքին ու արտաքին քաղաքականությանն է նվիրված Ու. Հեյլի և Է. Օզբուդունի[8] համահեղինակած <<Իսլամականությունը, ազատականությունը ու ժողովրդավարությունը>> աշխատությունը: Վերոնշյալ աշխատությունը ծավալուն ու հանգամանալի աշխատանք հանդիսանալով հանդերձ միտում ունի ԱԶԿ-ը ներկայացնել որպես ազատական ու ժողովրդավարական ուժ և խուսափում է ԱԶԿ-ի իսլամամետ հակումներն ուսումնասիրելուց:

Ա.Դավութօղլուի անձի դերակատարման համար կարևոր է Գ. Զենգինի[9] մենագրությունը: Այն հարուստ փաստական նյութ է պարունակում Դավութօղլուի գործունեության վերաբերյալ:

Օտար հեղինակներից Թուրքիայի Հանրապետության մասին օգտագործվել են Է. Մանգոյի[10], Ֆ. Ահմադի[11], Ա. Ռաբասայի ու Ս. Լարաբի[12]

Weltanschaungs on Political Theory, Lanham, MD, University Press of America, 1994, **Davutoglu A.,**CivilizationalTransformation and the Muslim World, Kuala Lumpur, Mahir Publications, 1994.

[5]**Yavuz H**., Islamic Political Identity in Turkey, Oxford, Oxford University Press, 2003.

[6]**Tunaya**, **T.Z.,** İslamcılık Cereyanı, cilt 3, Dizgi - Baskı - Yayımlayan: Yenigün Haber Ajansı Basın ve Yayıncılık A.Ş. Şubat 1998.

[7] **Duman D.,** Demokrasi sürecinde Türkiye'de İslamcılık.,Ankara, <<Dokuz Eylül Yayınları>>, 1999.

[8] **Hale W., Ozbudun E.,** Islamism, Democracy and Liberalism in Turkey: The Case of the AKP, Routledge Studies in Middle Eastern Politics, New York, 2010.

[9] **Zengin G.,** Hoca: Türk Dış Politikası'nda "Davutoğlu Etkisi", <<İnkılâp Kitabevi>>, İstanbul, 2010.

[10]**Mango A.**, Turkey: The Challenge of a New Role (The Washington Papers), Praeger, 1994.

[11]**Ahmad F.,** The Turkish Experiment in Democracy 1950-75, London, The Royal Institute of International Affairs, 1977

[12] **Rabasa A., Larabbee F. S.,**The Rise of Political Islam in Turkey, RAND, 2008.

մենագրությունները, Թ. Սթրաուբաարի[13], Հ. Քրամերի[14], Ն. Թոչիի ու Ջ Ուոքերի[15], Ի. Լեսերի[16], Ա. Մուրինսոնի[17] և այլոց հոդվածները:

Աշխատության մեջ օգագործվել են նաև հատվածներ միջազգային հեղինակավոր վերլուծաբանների ու թուրքագետների հետ հեղինակի նամակագրությունից:

Թուրք քաղաքագետ Բ. Օրանի[18] խմբագրած <<Թուրքիայի արտաքին քաղաքականությունը>> երկհատորյակը կարևոր է Թուրքիայի Հանրապետության ընդհանուր արտաքին քաղաքականությունն ընկալելու և ԱԶԿ-ի կառավարման շրջանի հետ համեմատական անցկացնելու տեսանկյունից: ԱԶԿ-ի ձևավորման գործընթացի լուսաբանման տեսանկյունից կարևոր է Հ. Յավուզի խմբագրած <<Նոր Թուրքիայի առաջացումը>> ժողովածուն, ուր տարբեր հեղինակներ վերլուծական հոդվածներով հանդես են եկել ԱԶԿ-ի ինքնության, տնտեսական քաղաքականության և էվոլյուցիայի վերաբերյալ[19]: Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում իսլամական գաղափարախոսության ընկալելու համար մեծ կարևորություն ունի նաև <<Ժամանակակից Թուրքիայի քաղաքական միտքը>> ժողովածուի վեցերորդ հատորը՝ <<Իսլամականությունը>>[20]: ԱԶԿ-ի ընդհանուր քաղաքականության վերաբերյալ Ու. Ջիզրեի[21] խմբագրած <<Աշխարհիկ ու կրոնական քաղաքականությունը Թուրքիայում. Արդարություն և զարգացում կուսակցության ստեղծումը>> ժողովածուն կարևորություն ունի

---

[13]**Straubhaar T**.,Turkey as an Economic Neighbor, Turkey and Its Neighbours: Foreign Relations in Transition, Lynne Rienner Publishers, London, 2012.

[14]**Kramer H**., AKP's 'New' Foreign Policy between Vision and Pragmatism, Working Paper FG 2, 2010/01 SWP, Berlin,

[15]**Tocci N., Walker J**., From Confrontation to Engagement: Turkey and the Middle East, Turkey and Its Neighbors: Foreign Relations in Transition, Lynne Rienner Publishers, London, 2012.

[16]**Lesser I.,**The New Turkish Lexicon, Analysis, November 3, 2009, On Turkey, GMF.

[17]**Murinson A**., The strategic depth doctrine of Turkish foreign policy, Middle Eastern Studies, Vol. 42, No. 6, 2006.

[18]**OranB.,**Türk Dış Politikası-Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, 2 Cilt, İstanbul, <<İletişim Yayıncılık>>, 2001.

[19] The Emergence of a New Turkey: Democracy and the AK Parti, Salt Lake City: Utah University Press, 2006, Ed. **Yavuz H.**

[20]Modern Türkiye'de Siyasi Düşünce Cilt 6, İslamcılık, 2004, İstanbul, <<İletişim Yayınları>>, Ed. **Aktay Y.,** 1112 s.

[21] Secular and Islamic Politics in Turkey: The Making of the Justice and Development Party, Routledge Studies in Middle Eastern Politics, 2008, **Ed. Cizre Ü.**

ԱԶԿ-ի իսլամամետ քաղաքականության ուսումնասիրման տեսանկյունից: Թուրքիայի քաղաքականությունը հարակից տարածաշրջաններում հանգամանալի հետազոտվել է Ռ. Լինդենի[22] խմբագրած ժողովածուի մեջ, ուր հեղինակները վերլուծել են Թուրքիայի տնտեսական, էներգետիկ, միգրացիոն արտաքին քաղաքական չափումները:

Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսլականը հասկանալու համար օգտակար են ԱԳ նախարարներ Ի. Ջեմի[23] և Ա. Դավութօղլուի[24] հոդվածները: Ինչ վերաբերում է թուրք վերլուծաբանների հոդվածներին, ապա հարկ է նշել, որ նրանց զգալի մասը՝ Ֆ. Քեյման[25], Թ. Օղուզլու[26], Մ. Բաբաջան[27], Ա. Յըլդըրըմ, Ֆ. Էքմեքչի[28], Ք. Կիրիշչի[29], Բ. Արաս[30], Ի. Քալըն[31] և այլք հակված է արտաքին քաղաքականության այնպիսի վերլուծությանը, որը Թուրքիայի արտաքին քաղաքականութան տարածաշրջանային ակտիվությունը դիտարկում է աշխարհաքաղաքական գործոնների և բանական քաղաքականության լույսի ներքո ու շրջանցում է նկատվող միտումը, որ Թուրքիան տարածաշրջանում վարում է օսմանյան տեսլականով շարժվող քաղաքականություն ու իսլամամետ գիծ: Արևմուտքից աճող օտարման, Թուրքիայի տարածաշրջանային իսլամամետ

---

[22]Turkey and Its Neighbors: Foreign Relations in Transition, Lynne Rienner Publishers,London, **Ed. Linden R**. et al, 2012.

[23]**Cem İ,** Turkish Foreign Policy: Opening New Horizons for Turkey at the Beginning of a New Century, Turkish Policy Quarterly, Vol. 1 No. 1 - Spring 2002.

[24]**Davutoğlu A.**, Türkiye merkez ülke olmalı, Radikal, 26 Şubat 2004.; **Davutoglu A,** A Forward Looking Vision for the Balkans, SAM Vision Papers, No 1, October 2011; **Davutoglu A,** Turkey's Foreign PolicyVision: An Assessment of 2007, Insight Turkey, Vol.10, No.1, 2008; **Davutoglu A,** Turkey's Zero Problem Foreign Policy, Foreign Policy Magazine, 20 May 2010.

[25] **Keyman F**., Turkish Foreign Policy in the Era of Global Turmoil, SETA Policy Brief, No. 39, December 2009.

[26]**Oğuzlu T**., Middle Easternization of Turkey's Foreign Policy, Turkish Studies, Vol. 9. No 1, 2008.

[27]**Babacan M**.,Whither an axis shift: A perspective from Turkey's foreign trade,Insight Turkey , Vol. 13, No. 1, January 2011, pp. 129-157.

[28]**Yıldırım A., Ekmekçi F.,** The AKP and the Eastern Turn (?) of Turkey: An Economic Analysis, USAK Yearbook of International Politics and Law, 5/2012,pp. 36-70.,

[29]**Kirişci K**.,Turkey's foreign policy in turbulent times. Chaillot Paper - No92 - 01 September 2006.

[30]**Aras B**. Turkey and the Palestinian Question, SETA Policy Brief, No. 27, January 2009.

[31]**Kalın İ.,**Debating Turkey in the Middle East: The Dawn of a New Geo-Political Imagination?",Insight Turkey, Vol. 11, No. 1, 2009, pp. 83-96.

միտումների մասին առավելապես հակված են գրելու ԱՄՆ-ի վերլուծական կենտրոններում աշխատող կամ ազատական կողմնորոշում ունեցող Թուրքիայի վերլուծական կենտրոնների վերլուծաբանները՝ Ս. Չաղափթայ[32], Օ. Թաշփընար[33] և այլք: Հ. Յավուզի[34], Զ. Օնիշի[35], Բ. Դուրանի[36] աշխատանքներն ավելի անաչառ են ԱԶԿ-ի եվրոպական նախաձեռնության ներքաղաքական դրդապատճառները վերլուծելու հարցում: ԱԶԿ-ի կառավարման շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչը ընկալելու համար օգտագործել ենք Ք. Կիրիշչիի[37], Զ. Օնիշի[38], Ա. Աթլրի[39], Յ. Քայայի[40], Ս. Գյումուշչուի[41] հոդվածները:

Թուրքիայի քաղաքական համակարգում իսլամական ուժերի դերակատարման մասին կարևոր են հայ հեղինակների մենագրությունները: Ռ. Կոնդակչյանի[42] աշխատությունը մանրամասն անդրադառնում է մինչև 1970-ական թթ. Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում իսլամական ուժերի գործունեությանը: Վ. Տեր-

---

[32]**S. Çağaptay**, "AKP'nin Diş PolitikasıNeo-Osmanlıcı Değil," Referans,6 Mayıs 2009,

[33]**Ö.Taşpınar,**The Rise of Turkish Gaullism: Getting Turkish-American Relations Right,Insight Turkey, Vol. 13, No.1, 2011

[34]**Yavuz H**. Secularism and Muslim Democracy in Turkey, Cambridge University Press, 2009.

[35]**Öniş Z.,** Multiple Faces of the 'New' Turkish Foreign Policy: Underlying Dynamics and a Critique, Insight Turkey, Vol. 13, No. 1, 2011.

[36]**B. Duran**, Steering toward conservative democracy, a revised Islamic agenda or management of new crises?, Secular and Islamic Politics in Turkey, The making of the Justice and Development Party, Routledge Studies in Middle Eastern politics, 2008.

[37]**Kirişci K**., The Transformation of Turkish Foreign Policy: The Rise of the Trading State, New Perspectives on Turkey, N 40(1), 2009.

[38]**Öniş Z.,** Conservative Globalists versus Defensive Nationalists: Political Parties and Paradoxes of Europeanization in Turkey, Journal of Southern Europe and the Balkans,Vol. 9, No 3, December 2007, **Öniş Z.,** Triumph of Conservative Globalism: The Political Economy of the AKP Era, SSRN Working Paper Series 02, January 1, 2012, **Öniş Z.** Turkey and the Arab Spring: Between Ethics and Self-Interest, Insight Turkey, Vol. 14, No. 3, 2012.

[39]**Atlı A**., Businessmen as Diplomats: The Role of Business Associations in Turkey's Foreign Economic Policy, Insight Turkey, Vol. 13, No.1, 2011.

[40]**Kaya Y.,** Turkey's Turn to the East and the Intra-Class Contradictions in Turkey, Global Discourse, 2011.

[41]**Gumuscu S**. , Economic Liberalization, Devout Bourgeoisie, and Change in Political Islam: Comparing Turkey and Egypt, EUI RSCAS; 2008/19; Mediterranean Programme Series.

[42]**Кондакчян Р.,** Турция: внутренняя политика и ислам, Ереван Изд-во АН АрмССР 1983.

Մաթևոսյանը[43] հանգամանալի վերլուծել է իսլամի դերը Թուրքիայի քաղաքական համակարգում 1970-2001թթ.՝ մինչև իսլամամետ <<Ազգային տեսակետ>> շարժման պառակտումը: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասի ու մասնավորապես Հայաստանի նկատմամբ հասկանալու գործում կարևոր նշանակություն են ունեցել հայ հեղինակներ Ա. Ավագյանի[44], Գ. Արշակյանի[45], Ռ. Սաֆրաստյանի[46], Հ. Դեմոյանի[47], Տ. Մկրտչյանի ու Վ. Պետրոսյանի[48] ուսումնասիրությունները:

Հավելենք, որ միջազգային հարաբերությունների տեսաբանների[49] տարբեր աշխատություններ կարևոր են եղել վերլուծության համար:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ԱԶԿ-ի կառավարման շրջանում ներկայացված է նաև Թուրքիայի վերլուծական կենտրոնների՝ Տնտեսական ու սոցիալական հետազոտությունների թուրքական հիմնադրամի (ԹԵՍԵՎ, Türkiye Ekonomik ve Sosyal Etüdler Vakfı, TESEV) , Քաղաքական, տնտեսական ու սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (ՍԵԹԱ, Siyaset Ekonomi Ve Toplum Araştırmaları Vakfı, SETA), Միջին Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (ՕՐՍԱՄ, Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi, ORSAM), Միջազգային ռազմավարական վերլուծությունների հիմնադրամի (ՈՒՍԱՔ, Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu, USAK), Ռազմավարական հաղորդակցության կենտրոնի (ՍԹՐԱԹԻՄ, Stratejik İletişim Merkezi, STRATİM), Թուրք-

---

[43]**Տեր-Մաթևոսյան Վ.,** Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.), Երևան, <<Լիմուշ>>, 2008:

[44]**Ավագյան Ա.,** Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994թթ., Հայկական բանակ, թիվ 3(49), 2006.

[45]**Արշակյան Գ.,** Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Երևան, <<Գիտություն>>, 2009:

[46]**Սաֆրաստյան Ռ.**, Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. աշխարհառազմավարական զինադադար, 21-րդդար, թիվ 4 (10), 2005 թ.:

[47]**Демоян Г.,** Турция и Карабахский конфликт в конце XX – начале XXI веков. Историко-сравнительный анализ, Ереван, Авторское издание, 2006.

[48]**Mkrtchyan T; Petrosyan V.,** Integration of Transcaucasia: Continued Failure and Hope, Turkish Policy Quarterly, Vol 8, No 1, Spring 2009.

[49]**Alden Ch., Aran A.,**, Foreign Policy Analysis: New Approaches, London and New York, Routledge; 1 edition, 2011, **Allison G., Halperin M.,** Bureaucratic Politics: A Paradigm and Some Policy Implications, World Politics, Vol. 24, 1972, **Holsti K.J,** National Role Conceptions in the Study of Foreign Policy, International Studies Quarterly, Vol. 14, No. 3, September., 1970.

ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (ԹԱՍԱՄ, Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi, TASAM) հետազոտություններում:

Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև օտարերկրյա վերլուծական կենտրոնների ու գիտահետազոտական ինստիտուտների՝ Ռուսաստանի Մերձավոր Արևելքի ինստիտուտի[50], ամերիկյան վերլուծական կենտրոններից Բրուքինգսի ինստիտուտի[51], ՌԱՆԴ-ի[52], Վաշինգտոնի Մերձավոր Արևելքի ինստիտուտի[53], Կոնգրեսի հետազոտական ծառայության[54] հրատարակած աշխատանքները:

Հաշվի առնելով Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ ԵՄ-ի կարևորությունը՝ ԵՄ-ի պաշտոնական <<Առաջընթացի զեկույցները>>[55] արժեքավոր նյութ են տվյալ ուղղությունն ուսումնասիրելու հարցում: Այլ զեկույցներից կարևորում ենք Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցները[56] Թուրքիայի արտաքին քաղաքականության տարբեր հիմնախնդիրների մասին:

Թուրքական[57], արտերկրյա[58] մամուլը, նաև միջազգային հարաբերություններն ուսումնասիրող հեղինակավոր պարբերականները[59] ևս օգտակար են եղել Թուրքիայի վերաբերյալ ուսումնասիրության համար:

---

[50]**Гаджиев А.,**К вопросу об участии Турции в ШОС, Институт Ближнего Востока, 21 мая 2012. http://www.iimes.ru/rus/frame_stat.html.

[51]**Taşpınar Ö.,** Turkey's Strategic Vision and Syria, The Washington Quarterly, Summer 2012, http://www.brookings.edu/research/articles/2012/08/turkey-taspinar.

[52] **Rabasa A., Larabbe S.,**The Rise of Political Islam in Turkey,http://www.rand.org/pubs/monographs/MG726.html.

[53]**Cagaptay S.,**Hamas Visits Ankara: The AKP Shifts Turkey's Role in the Middle East, Policy Watch 1081, The Washington Institute, 16 February 2006,http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/hamas-visits-ankara-the-akp-shifts-turkeys-role-in-the-middle-east.

[54]**Morelli V**., European Union Enlargement: Report on Turkey's Accession Negotiations.Section Research Manager, CongressionalResearch Service, 10 January, 2011, http://fpc.state.gov/documents/organization/174199.pdf

[55]Turkey Progress Reports, Brussels, http://ec.europa.eu/enlargement/countries/strategy-and-progress-report.

[56] Turkey and the Middle East: Ambitions and Constraints. Crisis Group Europe Report N°203, Istanbul/Brussels, 7 April 2010; Turkey's Crises over Israel and Iran, Europe Report N°208, Istanbul/ Brussels, 8 September 2010.

[57]Hürriyet, Hürriyet Daily News, Milliyet, Milli Gazate, Radikal, Referans, Sabah, Sunday's Zaman, Taraf, Today's Zaman, Turkish Times, Yeni Şafak, Zaman.

[58] The Guardian, The Jerusalem Post, The Haaretz, The National, The New York Times, The Financial Times, The Turkish Times, The Washington Post.

Պաշտոնական տեղեկատվության ստանալու համար օգտագործվել են Արդարություն և զարգացում կուսակցության[60], Թուրքիայի ԱԳՆ-ի[61], Թուրքիայի ԵՄ-ի նախարարության[62], Թուրքիայի Էկոնոմիկայի նախարարության[63], ՀՀ նախագահի[64], ՀՀ ԱԳՆ-ի[65] ու Սահմանադրականդատարանի[66]պաշտոնական կայքերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում են հետազոտության արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթն ու պաշտպանության դրված հիմնական խնդիրները: Ներկայացված են ատենախոսության պրակտիկ նշանակությունը, նաև մեթոդաբանությունը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է <<**ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության գաղափարախոսությունը և առանձնահատկությունները**>>:

<<**Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության բնութագիրը նախքան ԱԶԿ-ը**>> առաջին ենթագլխում ներկայացվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության ընդհանուր ուղեգիծը, որը բնորոշվում էր արևմտականացման ու ստատուս քվոյի պահպանման սկզբունքներով: Քեմալական հեղափոխության աշխարհիկացման ու արևմտականցման նախագծերի իրականացման արդյունքում Թուրքիայի

---

[59] European Journal of Economic and Political Studies, European Journal of Social Sciences, Foreign Policy Magazine, Insight Turkey, International Affairs, Middle East Quarterly, Perceptions: Journal of International Relations, Turkish Policy Quarterly, Turkish Studies, World Politics, Bilgi.

[60]AK Parti Programı, http://www.akparti.org.tr/site/akparti/parti-programi#bolum6

[61] Turkey-EU Relations, http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-the-european-union.en.mfa.

[62]History of Turkey-EU Relations, http://www.abgs.gov.tr/index.php?p=111&l=2.

[63] Middle East Regional Information, http://www.economy.gov.tr/index.cfm?sayfa=countriesandregions&region=4.

[64]ՀՀնախագահիելույթներևուղերձներ, ՆախագահՍերժՍարգսյանիելույթըԿիպրոսիՀանրապետությանՆերկայացուցիչների պալատում, http://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/01/17/news-84/.

[65]Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, http://www.mfa.am/hy/country-by-country/tr.

[66]ՍԴՈ – 850, http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-850.pdf.

Հանրապետությունը սկսեց ինտեգրվել արևմտյան կառույցներին, ինչպիսիք էին ՆԱՏՕ-ն և ԵՄ-ի իրավանախորդ Եվրոպական տնտեսական համայնքը: Թուրքիայի աշխարհաքաղաքական բարդ կացությունը, հատկապես Խորհրդային Միության սպառնալիքը ևս մեծապես նպաստեց Թուրքիայի ինտեգրմանն արևմտյան կառուցներին:

Նախքան ԱԶԿ-ի իշխանության գալը 2002 թ.-ին Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցան երկու նշանակալի զարգացում: Առաջինը 1990–ական թթ. իրար հաջորդող կառավարությունների կողմից էներգետիկ պայմանագրերի ստորագրումն էր հարևան պետությունների հետ: Դրանց իրականացման հետևանքով ԱԶԿ-ի կառավարման ընթացքում Թուրքիան կախվածության մեջ հայտնվեց Իրանից, Ռուսաստանից, Ադրբեջանից: Մյուս զարգացումը, որ նախորդել էր ԱԶԿ-ի կառավարմանը,1999 թ. ԵՄ-ի անդամակցության թեկնածուի կարգավիճակի ձեռքբերումն էր: Դրա արդյունքում սկիզբ դրվեց Թուրքիայի արտաքին քաղաքականությանեվրոպականացմանը:

<<**Արդարություն և զարգացում կուսակցության արտաքին քաղաքականության գաղափարախոսությունը**>> վերնագրված երկրորդ ենթագլխում վերլուծության է ենթարկվում ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության գաղափարախոսությունը և տեսլականը: ԱԶԿ-ի արտաքին քաղաքական գաղափարախոս համարվող Ահմեթ Դավութօղլուի վաղ աշխատություններում առկա քաղաքակրթությունների անհամատեղելիության ու իսլամական քաղաքակրթության առանձնահատկությունների մասին դրույթները որոշակիորեն արտացոլված են նաև նրա հիմնական <<Ռազմավարական խորք>> աշխատության մեջ, ուր հեղինակը Թուրքիայի գլխավոր դժբախտությունը համարում է իսլամական քաղաքակրթությունից դուրս գալու և օտար քաղաքակրթության մեջ մտնելը: Հեղինակն, այսպիսով, ունի իսլամակենտրոն աշխարհընկալում, որը մշտապես դրսևորվում է նաև գործնականում: Իսլամակենտրոն աշխարհընկալումից բացի Դավութօղլուի աշխատանքում նկատելի է Թուրքիայի իսլամական ուժերի բնորոշիչ համարվող նեո-օսմանական աշխարհընկալումը և տեսլականը:ԱԶԿ-ի ծրագիրն ու<<Թիրախ 2023>> տեսլականը ևս արտացոլում են ԱԶԿ-ի իսլամակենտրոն ու նեո-օսմանական գաղափարախոսությունն ու տեսլականը:

<<**ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման առանձնահատկությունները**>> վերնագրով երրորդ ենթագլխում վերլուծել ենք այն հիմնական առանձնահատկությունները, որ բնորոշ են ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակի արտաքին քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը: Նման

առանձնահատկություններից մասնավորապես կարելի է նշել ԱԶԿ-ի ղեկավարների ինքնությունը, Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նոր դերակատարների ի հայտ գալը, ինչպիսիք են վերլուծական կենտրոնները, պետական գործակալությունները, բիզնես ասոցիացիաները: ԱԶԿ-ի կառավարման տասնամյակին բնորոշ է նաև արտաքին քաղաքական գերատեսչության և կառավարության միջև գաղափարական հակասությունները: Առանձնահատկություն է նաև այն, որ ԶՈՒ-ը ԱԶԿ-ի կառավարման շրջանում զրկվեցին արտաքին քաղաքականության վրա ունեցած լծակներից:

ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության նորույթներից են Թուրքիայի միջնորդությունները տարբեր հակամարտություններում, որը տեղավորվում է <<տարածաշրջանային կարգ հաստատողի>> ու <<կենտրոնական երկրի>> դերակատարման դրույթների մեջ: Թուրքիան վերջին տասնամյակում նախաձեռնել է միջնորդություններ տարբեր հակամարտող կողմերի, նաև ներպետական դերակատարների ու անգամ ահաբեկչական խմբավորումների միջև, որը Թուրքիայի միջնորդությունների հիմնական հատկանիշներից է: Չնայած Թուրքիայի միջնորդական ջանքերին՝ դրանք ժամանակի ընթացքում ստանում են ավելի կողմնակալ ու կրոնական բնույթ և որպես կանոն անհաջողությամբ են ավարտվում:

<<Թուրքիայի արտաքին քաղաքականության ուղղություններում ռազմավարական և մարտավարական փոփոխությունները 2002-2012թթ.>> վերնագրված երկրորդ գլխում ներկայացվել և վերլուծության են ենթարկվել հիմնական ուղղություններով Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նկատվող փոփոխությունները:

<<Թուրքիայի ԵՄ –ի անդամակցության գործընթացը>> առաջին ենթագլխում վերլուծության է ենթարկվել Թուրքիայի ԵՄ-ի ինտեգրման գործընթացը:Չնայած ԱԶԿ-ի իշխանության գալու պահինԹուրքիան արդեն ստացել էր անդամակցության թեկնածուի կարգավիճակ, սակայն ԱԶԿ-ը մեծ ջանքեր գործադրեց 2002-2005 թթ.խորհրդարանում օրենսդրական բարենորոգումների միջոցով ԵՄ-ի պահանջները բավարարելու ուղղությամբ: Դրա արդյունքում 2004 թ. Բրյուսելում Եվրոպական խորհրդի նիստը որոշեց 2005 թ. սկսել անդամակցության բանակցությունները Թուրքիայի հետ[67]: Իսլամամետ շարժումից սերող ԱԶԿ-ի նման դիրքորոշումը պայմանավորված էր ԵՄ-ի հետ իսլամամետ բուրժուազիայի ունեցած տնտեսական կապերով և ներքաղաքական դաշտում ԶՈՒ-ի

[67]Տես Թուրքիայի ԱԳՆ-ի պաշտոնական կայքը, Turkey-EU Relations, http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-the-european-union.en.mfa.

գերակա դիրքով: Բարենորոգումների միջոցով ԱԶԿ-ը աստիճանաբար զրկեց ԶՈՒ-ը արտաքին քաղաքականության վրա ունեցած լծակներից: Սակայն 2005 թ.-ից հետո Թուրքիան սկսեց բազմազանեցնել քաղաքական ուղղությունները: Չնայած Թուրքիայի կողմից ԵՄ-ի անդամակցության հետ կապված բարենորոգումների դանդաղեցմանը՝ հարկ է նշել, որ ԱԶԿ-ը հակված չէ դադարեցնել բանակցությունները ԵՄ-ի հետ, քանզի այն կունանա տնտեսական ու քաղաքական լուրջ հետևանքներ:

<<Թուրքիայի աճող ինքնուրույնությունը ԱՄՆ-ի հետ հարաբերություններում>> ենթագլխում ներկայացվում են երկկողմ հարաբերություններում Թուրքիայի աճող ինքնուրույնությունը:

Թուրքիայի աճող ինքնուրույնության մեջ դեր խաղացին մի շարք կարևոր գործոններ: Դրանցից առաջինը ընդհանուր սպառնալիքի վերացումն էր: Երկրորդ պատճառը պայմանավորված էր ԱԶԿ-ի իսլամամետ ինքնությամբ, որի պայմաններում ԱՄՆ-ի կողմից սպառնալիք համարվող ծայրահեղ իսլամական կազմավորումները ԱԶԿ-ի համար վտանգ չէին համարվում: 2006 թ. Թուրքիայի վարչապետ Էրդողանի այն հայտարարությունը, թե Թուրքիան հիասթափված է ԱՄՆ-ի կողմից Համասի օրինական հաղթանակը չճանաչելու փաստից, վկայում է երկկողմ հարաբերությունների օտարման գործում ԱԶԿ-ի իսլամակենտրոն աշխարհայացքի ու ինքնության դերակատարման մասին:

2008 թ. օգոստոսի ռուս-վրացական պատերազմի ընթացքում Թուրքիան հայտնվեց ՆԱՏՕ-ի առջև դաշնակցային պարտավորությունների կատարման ու Ռուսաստանից ունեցած էներգետիկ կախվածության միջև: Թուրքական կողմն արգելեց ԱՄՆ-ի նավերին մնալը Սև ծովում ավելի քան 21 օր, ինչպես նախատեսվում է Մոնտրոյի կոնվենցիայում[68]: Ինչպես հայտարարեց Թուրքիայի վարչապետի խորհրդական Ահմեթ Դավութօղլուն. <<Ցավոք Թուրքիան իրեն չի կարող թույլ տալ մեկուսացնել Ռուսաստանը: Մենք 75-80 %-ով կախված ենք ռուսական էներգակիրներից>>[69]:Այսպիսով, էներգետիկ կախվածությունը հանդիսացավ ևս մեկ կարևոր գործոն Թուրքիայի ու ԱՄՆ-ի շահերի տարամիտման գործում: <<Արաբական գարունը>>, սակայն,Թուրքիայի համար վերհանեց ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի կարևորությունը: Թուրքիան 2011 թ.

---

[68] Տես **Igor Torbakov**, The Georgia Crisis and Russia-Turkey Relations, The Jamestown Foundation, 2008, p. 14.

[69] Տես Turkey's Top Foreign Policy Aide Worries about False Optimism in Iraq, Interview with Amet Davutoglu, Council on Foreign Relations, 19 September, 2008, http://www.cfr.org/turkey/turkeys-top-foreign-policy-aide-worries-false-optimism-iraq/p17291.

սեպտեմբերին ԱՄՆ-ի հետ ստորագրեց Իրանի սահմանին հակահրթիռային ռադարի տեղակայման համաձայնագիրը, իսկ 2012 թ. նոյեմբերինդիմեց ՆԱՏՕ-ին <<Patriot>> տեսակի պաշտպանական հրթիռներ Թուրքիայում՝ Սիրիայի սահմանին, տեղակայելու համար: Այս հանգամանքը վկայում է, որ երկկողմ հարաբերություններում աճող օտարման մեջ զգալի դեր էր կատարել ընդհանուր սպառնալիքի վերացումը:

<<Մերձավոր Արևելքում առաջնորդ դառնալու Թուրքիայի քաղաքականությունը>> վերնագրված երրորդ ենթագլխում վերլուծության են ենթարկվել տարածաշրջանում Թուրքիայի քաղաքականությունը: ԱԶԿ-ի նեո-օսմանական տեսլականում, որն արտացոլված է ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության գաղափարախոս Ահմեթ Դավութօղլուի <<Ռազմավարական խորք>> աշխատության մեջ, մեծ տեղ է հատկացվում Մերձավոր Արևելքին: Ըստ հեղինակի տարածաշրջանը հինգ դար խաղաղության մեջ պահած Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը պետք է օգտագործի անցյալի փորձառությունը տարածաշրջանային խնդիրների լուծման նպատակով[70]: Այսպիսով, ԱԶԿ-ի նեո-օսմանական տեսլականը, որը կապված էր կուսակցության ղեկավարների ինքնության հետ, կարևոր գործոն էր տարածաշրջանային գերակայության ձգտման և ակտիվ ներգրավվածության հարցում: Ինքնությունը, սակայն, միակ բացատրությունը չէ:Իսլամամետ բուրժուազիան, որը ներկայացնում են ՄՅՈՒՍԻԱԴ և ԹՅՈՒՍՔՈՆ բիզնես ասոցիացիաները, կարևոր դեր կատարեց տարածաշրջանում Թուրքիայի ակտիվացման հարցում. թուրքական արդյունաբերական ապրանքները սպառելու համար տարածաշրջանը հարմար գոտի է հանդիսանում: Տարածաշրջանինկատմամբ Թուրքիայի քաղաքականության համար վճռորոշ գործոն է հանդիսանում նաև էներգետիկ կախումը: Ի վերջո հարկ է նշել աշխարհաքաղաքական նպաստավոր իրադրությունը և ուժային վակուումը Իրաքի պատերազմից հետո:

Թուրքիան տարածաշրջանում առաջնորդ դառնալու գործում, օգտագործելով տարբեր լծակներ, կարողացավ որոշակի ժամանակաշրջանում բարելավել հարաբերությունները Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի հետ, որի արդյունքում 2010 թ.կողմերը համաձայնության եկան ազատ առևտրի գոտու ստեղծման վերաբերյալ[71]:

---

[70] Տես **Ahmet Davutoğlu,** Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, << Küre Yayınları>>,. 2003, s. 331.

Այսպիսով, Թուրքիան տարածաշրջանում առաջնորդ դառնալու միջոցներից մեկը դիտարկում է տնտեսական ինտեգրումը:

Տարածաշրջանում դիրքերն ամրապնդելու նպատակով Թուրքիան նախաձեռնում է նաև միջնորդություններ ինչպես պետությունների՝ այնպես էլ ոչ պետական դերակատարներիմիջև: Սակայն, Թուրքիան ներկայումս հայտնվել է Իրաքի շիա իշխանությունների, Սիրիայի ալևի կառավարության, Իսրայելի հետ խոր հակասությունների մեջ՝աջակցելով Պաղեստինին, Համաս ահաբեկչական խմբավորմանը, Սիրիայի ու Իրաքի սուննի խմբավորումներին: Այս ամենը վկայում է օսմանյան փորձառության շնորհիվ տարածաշրջանը ընկալելու և գերիշխանության հասնելու Թուրքիայի հնարավորությունների սահմանափակության մասին:

<<Նոր մոտեցում Թուրքիայի բալկանյան քաղաքականության մեջ>> վերնագրված չորրորդ ենթագլխում վերհանվում է ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակումԲալկանների դերի վերաիմաստավորումը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: <<Ռազմավարական խորքում>> և Ահմեթ Դավութօղլուի տարբեր ելույթներում արտացոլվում է Բալկաններում Թուրքիայի քաղաքականության տեսլականը, որը կարելի է բնութագրել որպես նեո-օսմանական[72]:Գործնականում Թուրքիան տարածաշրջանում գերիշխանության հասնելու նպատակով դիմում է նախ քաղաքական լծակները ամրապնդելու միջոցներին: Մասնավորապես ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակումՍերբիայի հետ բարելավված հարաբերությունների շնորհիվ Թուրքիան միջնորդում է Սերբիայի իսլամաբնակ Սանջակ մարզի խմբավորումների հակասությունները հարթելու, որով նաև լծակ է ստանում Սերբիայի վրա: Մյուս կողմից Թուրքիան 2010 թ. Սերբիայի ու Բոսնիա-Հերցոգովինայի միջև միջնորդեց միմյանց տարածքային ամբողջականությունը հարգելու վերաբերյալ հռչակագրի ընդունման հարցում[73]: Սակայն Թուրքիայի միջնորդական ջանքերն ավելի են սրում տարածաշրջանի ժողովուրդների միջև հարաբերությունները:

<<Հարավային Կովկասում Թուրքիայի նոր նախաձեռնությունները և Ադրբեջանի հետ ռազմա-քաղաքական դաշինքի ինստիտուցիոնալացումը>>

---

[72] Տես Dışişleri Bakanı Sayın Ahmet Davutoğlu'nun IV Büyükelçiler Konferansı vesilesiyle Trakya Üniversitesi Balkan Kongre Merkezi'nde Yaptığı Konuşma, 29 Aralık 2011, Edirne., http://www.mfa.gov.tr/disisleri-bakani-sayin-ahmet-davutoglu_nun-iv_-buyukelciler-konferansi-vesilesiyle-trakya-universitesi-balkan-kongre-merkezi_nde.tr.mfa.

[73]Տես **Tuncay Babalı,** New Turkish Foreign Policy in the Balkans, 20 December 2010, http://sam.gov.tr/this-is-my-first-blog.

հինգերորդ ենթագլխի վերլուծության թեման տարածաշրջանում Թուրքիայի քաղաքականության նոր զարգացումներն են:

2008 թ. ռուս-վրացական պատերազմի օրերին Էրդողանն առաջարկեց ստեղծել <<Կովկասում կայունության ու անվտանգության պլատֆորմ>>[74]: Եթե նախկինում Թուրքիան նման փորձեր կատարում էր Ռուսաստանը դուրս մղելու և Արևմուտքն ընդգրկելու մոտեցումից ելնելով, ապա Էրդողանի առաջարկած <<Պլատֆորմը>> դուրս էր մղում Արևմուտքը: Այս նախաձեռնության մեջ կարևոր մաս էր կազմում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը, առանց որի <<Պլատֆորմի>> իրականացումն անհնար կլիներ: 2009 թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի միջնորդությամբ Ցյուրիխում ստորագրվեցին Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և Հարաբերությունները զարգացնելու մասին երկու արձանագրություն[75]:Թուրքիան, սակայն, գերագնահատեց սեփական հնարավորությունները: Ադրբեջանը, գործադրելով մի շարք լծակներ, կարողացավ ստիպել Թուրքիային հրաժարվել արձանագրությունները վավերացնելուց, բացի այդ Ռուսաստանը հակված չէր Հարավային Կովկասում, մասնավորաես ԼՂ կարգավորման մեջ ունեցած գերակա դիրքերը կիսել Թուրքիայի հետ:

2010 թ. սեպտեմբերի 16-ին Բաքվում Թայիփ Էրդողանի ու Իլհամ Ալիևի միջև ստորագրվեց Թուրքիայի ու Ադրբեջանի միջև Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհորդ ստեղծելու մասին պայմանագիրը:Այս պայմանագիրը փաստորեն ինստիտուցիոնալացրեց երկկողմ ռազմա-քաղաքական դաշինքը:Այսպիսով,փաստորեն, Թուրքիան, հետքայլ կատարելով Հարավային Կովկասում բոլոր հարևանների հետ հարաբերությունների կարգավորման իր մտադրությունից՝ դիմեց քայլերի, որոնք ավելի խորացրին բաժանարար գծերը տարածաշրջանում:

<<Թուրքիայի Realpolitik-ը Կենտրոնական Ասիայում>> վեցերորդ ենթագլուխը վերհանում է ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակում Կենտրոնական Ասիայում Թուրքիայի քաղաքականության փոփոխությունները: Ըստ այդմ Թուրքիայի քաղաքականությունն ավելի իրատեսական է նախօրդ տասնամյակի համեմատ: Եթե նախկինում այն շարժվում էր համաթյուրքական մղումներով, ապա այժմ Թուրքիայի

---

[74] Տես **Tigran Mkrtchyan, Vahram Petrosyan**, Integration of Transcaucasia: Continued Failure and Hope, Turkish Policy Quarterly, Vol 8, No 1, Spring 2009, p. 63.

[75]Տես Հայաստանի ԱԳՆ-ի պաշտոնական կայքը, Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, http://www.mfa.am/hy/country-by-country/tr.

քաղաքականությունն ավելի իրատեսական է: 2000-ական թթ. երկրորդ կեսից, սակայն, Թուրքիան տարածաշրջանը դիտարկում է նաև գլոբալ դերակատարումը մեծացնելու տեսանկյունից: Այս համատեքստում հատկանշական է, որ բացի 2009 թ. Թյուրքախոս երկրների համագործակցության խորհուրդի (Türk Dili Konuşan Ülkeler İşbirliği Konseyi, TDİK) նախաձեռնումը՝ Թուրքիան 2012 թ. ստացավ երկխոսության գործընկերոջ կարգավիճակ Շանհայի համագործակցության կազմակերպությունում:

<<Էներգետիկ գործոնի ազդեցությունը Ռուսաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների վրա>> յոթերորդ ենթագլուխն անդրադառնում է Ռուսաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների վրա էներգետիկ գործոնի ազդեցությանը: Թուրքիայի ու Ռուսաստանի միջև հարաբերությունների հիմնական միտումը կարելի է համարել Թուրքիայի էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից և երկու պետությունների արտաքին քաղաքական կուրսի որոշակի նմանությունը, քանի որ երկուսն էլ դժգոհ են Արևմուտքի կողմից իրենց հատկացված միջազգային դերակատարումից:

ԱԶԿ-ի կառավարման մոտ մեկ տասնամյակում երկկողմ հարաբերությունների տնտեսական ցուցանիշները թռիչք ապրեցին: 2003 թ. ընդամենը 6 միլիարդ դոլար առևտրաշրջանառությունը Ռուսաստանի հետ 2010 թ. հասավ 40 միլիարդի[76]: Հարկ է նշել, որ ապրանքաշրջանառության մեջ գերակշիռ մաս են կազմում էներգակիրները: Թուրքիան Ռուսաստանի միջոցով բավարարում է գազի պահանջների 63 % և նավթի 29 %-ը[77]:

Հաշվի առնելով 2006 թ. Սև ծովում ՆԱՏՕ-ի <<Active Endeavour>> ուժերի փոխարեն Թուրքիայի ու ծովափնյա պետությունների միջև ստեղծված ծովային ուժերի՝ <<Blackseafor>>-ի, <<Black Sea Harmony>>-ի իրողությունը, վերլուծական շրջանակները սկսեցին քննարկել ռուս-թուրքական ալյանսի կամ առանցքի ձևավորման հավանականությունը[78]: Այնուամենայնիվ, 2010 թ. Հայաստանի ու Ադրբեջանի հետ համապատասխանաբար Ռուսաստանի ու Թուրքիայի ստորագրած ռազմա-քաղաքական պայմանագրերը, և Սիրիայում ի հայտ եկած ճգնաժամը

---

[76]Տես Komşuluktan Stratejik İşbirliğine: Türk-Rus İlişkileri, ORSAM Rapor No 18, Ed. Kamalov I., 2010s. 26.

[77] Տես **Fatih Özbay**, The Relations between Turkey and Russia in the 2000s, Perceptions: Journal of International Affairs, Vol. XVI, No 3, SAM, Autumn 2011, p. 74.

[78]Տես**Fiona Hill, Omer Taspinar**,Turkey and Russia: Axisof the Excluded?,Survival, vol. 48 no. 1, Spring 2006, pp. 81–92.

վկայում են, որ էներգետիկ բնագավառում համագործակցությունը լիովին չի հարթել աշխարհաքաղաքական հակասությունները կողմերի միջև[79]:

<<**Նոր ուղղությունները Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ**>> ութերորդ ենթագլուխն անդրադառնում է Հարավային և Արևելյան Ասիայի դերի վերահիմաստավորմանը ԱԶԿ-ի կողմից և աֆրիկյան ու լատինաամերիկյան նախաձեռնություններին:

<<Ռազմավարական խորքում>> Ահմեթ Դավութօղլուն նշում է, որ քսանմեկերորդ դարը լինելու է Ասիայի և Աֆրիկայի դարը, ուստի հարավային և արևելյան ուղղություններով Թուրքիայի ձեռքբերած հաջողությունները կնպաստեն նաև Արևմուտքում նրա կարևորության աճին[80]:

Թուրքիայի հարաբերությունները Հարավային և Արևելյան Ասիայի հետ ունեն երկու հիմնական միտում՝ գլոբալ դերակատարման ձգտող ԲՐԻՔՍ պետությունների հետ համագործակցություն միջազգային ասպարեզում և տնտեսական շահեր: Ասիայում Թուրքիայի քաղաքական ու տնտեսական առաջին գործընկերը Չինաստանն է, որը ներկրումների ծավալով երրորդ պետությունն է Ռուսաստանից ու Գերմանիայից հետո և տասնչորսերորդն է Թուրքիայի արտահանման տեսանկյունից[81]: Թեև Թայիփ Էրդողանը քննադատեց 2009 թ. հուլիսին Սինցզյանում բռնկված անկարգությունների ճնշումը Չինաստանի իշխանությունների կողմից՝ որակվելով այն ցեղասպանություն, սակայնԹուրքիան գործնականում պահպանեց հավասարակշռված դիրքորոշումը: Թուրքիայի իշխանություններն առաջնայնություն են տալիս Չինաստանի հետ գլոբալ մակարդակում համագործակցությանը ու տնտեսական շահերին, քան էթնիկ համերաշխության հարցին: Հնդկաստանի հետ Թուրքիայի հարաբերությունները երկար ժամանակ պայմանավորված էին Պակիստանի հետ վերջինիս ջերմ հարաբերություններով: ԱԶԿ-ի իշխանությունների օրոք Թուրքիան սկսեց վերանայել իր դիրքորոշումը և Հնդկաստանը դադարեց դիտարկել Պակիստանի հետ հարաբերությունների տեսանկյունից: Թուրքիայի դիրքորոշման վերանայման վրա ազդեցություն ունեցան Թուրքիայի տնտեսական շահերը ու գլոբալ դերակատարման ձգտումը:

---

[79]Տես Rusya Türkiye'den uçakla ilgili açıklama istedi, Milliyet, 11 Ekim 2012.

[80]Տես**Ahmet Davutoğlu**, Stratejik Derinlik, ss. 287-288.

[81]Տես **Altay Atlı**,Questioning Turkey's China Trade, Turkish Policy Quarterly, Summer 2011, Vol.10, No. 2, p. 108.

ԵՄ-ի հետ բանակցային գործընթացի դանդաղումից հետո 2005 և 2006 թթ. Թուրքիան հռչակեցիր արտաքին քաղաքականության մեջ համապատասխանաբար Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի տարի[82]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ինչպես նախկինում, այնպես էլ ԱԶԿ-ի օրոք, Թուրքիան նոր ուղղություններով քայլերի դիմեց ԵՄ-ի ինտեգրման գործընթացի դանդաղելուց հետո, որը վկայում է քաղաքական, ոչ տնտեսական դրդապատճառների մասին: Աշխարհաքաղաքական դրդապատճառներն ի հայտ եկան հատկապես 2008 թ., երբ Թուրքիան Ստամբուլում կազմակերպվեց Թուրքիա-Աֆրիկա համագործակցության առաջին գագաթնաժողովը մոտ հինգ տասնյակ աֆրիկյան պետությանների մասնակցությամբ, որով Թուրքիան ապահովեց ՄԱԿ-ի ԱԽ-ի անդամակցության հարցում աֆրիկյան պետությունների ձայները[83]:Թուրքիան Աֆրիկա ներթափանցելու հարցում օգտագործում է նաև կրոնի և մարդասիրական օգնության գործիքները: Պաշտոնական Անկարան այսպիսով ստեղծում է <<բարոյական>> արտաքին քաղաքականություն վարող պետության կերպար, իսլամական աշխարհում ձեռք է բերում ավելի բարձր հեղինակություն, և վերջապես, միջազգային հարաբերություններում, զանազան կազմակերպություններում, հատկապես ՄԱԿ-ում ապահովում է աջակցություն Երրորդ աշխարհի երկրների կողմից:

Լատինական Ամերիկայի պետությունների հետ հարաբերությունները Թուրքիայի համար կարևոր նշանակություն ունեն նախ գլոբալ մակարդակում և միջազգային հարթակում համագործակցության տեսանկյունից: Մայրցամաքի երկրների հետ Թուրքիայի համագործակցության ֆորումներն են հիմնականում ՄԱԿ-ի ԱԽ-ը, ուր Բրազիլիան (2010-2011 թթ.) և Կոլումբիան (2011-2012 թթ.) ոչ մշտական անդամներ են, և Մեծ Քսանյակը, ուր Թուրքիան գործակցում է Բրազիլիայի, Մեքսիկայի ու Արգենտինայի հետ:

Ամփոփելով ատենախոսությունը՝ կարելի է անել հետևյալ հիմնական **եզրակացությունները**.

---

[82] Տես Թուրքիայի ԱԳՆ-ի պաշտոնական կայքը, Afrika Ülkeleri İle İlişkiler, http://www.mfa.gov.tr/turkiye-afrika-iliskileri.tr.mfa, Türkiye´nin Latin Amerika ve Karayiplere Yönelik Politikası ve Bölge Ülkeleri ile İlişkileri,http://www.mfa.gov.tr/i_-turkiye_nin-latin-amerika-ve-karayiplere-yonelik-politikasi-ve-bolge-ulkeleri-ile-iliskileri.tr.mfa.

[83] Նույն տեղում:

• ԱԶԿ-ի կառավարման շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության փոփոխության պատճառներն են հանդիսանում ԱԶԿ-ի ինքնությունը և նեո-օսմանական տեսլականը, Թուրքիայի տնտեսական վերելքը ու իսլամամետ բուրժուազիայի կողմից նոր շուկաների որոնումը, միջազգային հարաբերություններում տեղի ունեցած զարգացումները:

• Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման առանձնահատկություններից են արտաքին քաղաքականության դուրս գալը ԶՈՒ-ի ազդեցությունից, արտաքին քաղաքականության մեջ տարբեր դերակատարների՝ բիզնես ասոցիացիաների, վերլուծական կենտրոնների, ՀԿ-ների ազդեցության աճը:

. ԱԶԿ-ի կառավարման շրջանում Թուրքիան սկսեց անդամակցության բանակցություններ ԵՄ-ի հետ: ԱԶԿ-ի կողմից ԵՄ-ի ինտեգրման ուղղությամբ կատարված բարենորոգումներն ունեն ներքաղաքական դիրքի ամրապնդման ու տնտեսական շահերի ապահովման նպատակ:

. Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների հիմնական միտումը Թուրքիայի աճող ինքնուրույնությունն է, որը պայմանավորված է անվտանգության ընդհանուր սպառնալիքների վերանալու, ԱԶԿ-ի իսլամամետ ինքնության ու նեո-օսմանական տեսլականի, Թուրքիայի էներգետիկ կախվածության ու խոցելիության հանգամանքներով:

• Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ մեծացել է Մերձավոր Արևելքի դերակատարումը: Թուրքիանի քաղաքականության նոր միտումը տարածաշրջանային առաջնորդ դառնալն է՝տնտեսական ինտեգրման, միջնորդությունների իրականացման, նաև Պաղեստինի խնդրի աջակցության միջոցով:

• Թուրքիան վերաիմաստավորել է Բալկանների դերը իր քաղաքականության մեջ, որը դրսևորվում է հատկապես միջնորդական ջանքերով, որոնք իրականում ավելի են խորացնում բևեռացումը տարածաշրջանի ժողովուրդների միջև:

• Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության տեսանկյունից նորույթ էր <<Կովկասյան կայունության և անվտանգության պլատֆորմի>> առաջարկը, որն ըստ էության ենթադրում էր տարածաշրջանի նկատմամբ Ռուսաստանի ու Թուրքիայի համատեղ ազդեցության գոտու ստեղծում: Այն տապալվեց Թուրքիայի ուժերի գերագնահատման և սխալ հաշվարկների հետևանքով:

• Կենտրոնական Ասիայում Թուրքիայի վարած արտաքին քաղաքականությունը հիմնվում է ոչ թե պանթյուրքական նկրտումների վրա, ինչպես նախկինում, այլ իրատեսական հաշվարկների ու շահերի: Տարածաշրջանը ներկայումս կարևորվում է նաև Թուրքիայի գլոբալ ազդեցությունը մեծացնելու տեսանկյունից:

• Էներգետիկ համագործակցությունը դարձել է ռուս-թուրքական հարաբերությունները կանխորոշող կարևոր գործոն: Չնայած այս հանգամանքին՝ Կովկասում <<Պլատֆորմի>> տապալում ու Սիրիայի շուրջ հարաբերությունների սրումը վկայում են Թուրքիայի ու Ռուսաստանի ռազմավարական մրցակցության մասին:

• Թուրքիան վերաիմաստավորել է Հարավային ու Արևելյան Ասիայի դերը արտաքին քաղաքականության մեջ: Չինաստանում և Հնդկաստանում առևտրատնտեսական շահերը ու գլոբալ մակարդակում համագործակցությունը ստիպում են Թուրքիային վերանայել Պակիստանին և Չինաստանի ույղուրներին ցուցաբերվող աջակցությունը:Թուրքիան նոր նախաձեռնություններ է ցուցաբերում Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում, որը կարևոր է նախ միջազգային կառույցներում՝ հատկապես ՄԱԿ-ում աջակցություն ստանալու, աշխարհաքաղաքական ասպարեզում բարոյական տերության հեղինակություն ստեղծելու, նաև իր ընտրազանգվածը հանդիսացող իսլամամետ գործարարների ապրանքները իրացնելու տեսակետից:

Հավելվածում ներկայացված է արտերկրյա ու թուրք միջազգայնագետների ու թուրքագետների հետ հեղինակի նամակագրությունը:

Աշխատանքի հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում.

1. Թուրքական նոր ինքնության կայացումը <<Արդարություն և զարգացում>> կուսակցության օրոք և դրա ազդեցությունը արտաքին քաղաքականության վրա: Լրատու: Գիտական հոդվածների ժողովածու, Մեսրոպ Մաշտոց համալսարան, Արցախ, 2010, 1(8), էջ 41-53:
2. Թուրք-իսրայելական հարաբերությունները 2002-2011թթ.: Բանբեր Երևանի համալսարանի,138.6, Երևան, 2012, էջ 44-52:
3. ԵՄ-Թուրքիա հարաբերությունների վերջին զարգացումները ու նոր միտումները: Արևելագիտության հարցեր, Երևան, ԵՊՀ, Հատոր 7, 2012 թ., էջ 229-241:

Исраелян Андраник Гарегинович

ОСОБЕННОСТИ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ В ПЕРВОМ ДЕСЯТИЛЕТИИ ПРАВЛЕНИЯ ПАРТИИ СПРАВЕДЛИВОСТЬ И РАЗВИТИЕ (2002-2012гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02-"Всемирная история".
Защита состоится 13 июня 2013 г. в 15,00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.

Резюме

Цель исследования заключается в анализе особенностей внешней политики Турции в течении первого десятилетия нахождения у власти партии Справедливость и развитие (2002-2012 гг.) Структура работы подчинена целям и основным задачам исследования и состоит из введения, двухглав, заключения, списка использованных источников и литературы и приложения. Во введении обуславливается актуальность исследования, представляются основные цели и задачи исследования, исторические рамки, методология, краткий обзор использованной литературы и источников, а также теоретическое и прикладное значение диссертации.

Первая глава диссертации «Идеология и особенности внешней политики партии Справедливость и развитие (ПСР)» состоит из трех подглав. В первой подглаве представлена линия внешней политики Турции до прихода к власти ПСР в 2002. В следующих подглавах анализируются идейные основы, а также особенности формирования и осуществления внешней политики ПСР. Вторая глава «Стратегические и тактические изменения в направлениях внешней политики Турции(2002-2012гг.)» состоит из восьми подглав, в которых исследуются стратегические и тактические изменения политики Турции в отношениях с ЕС, США, Россией, в Ближнем Востоке, Балканах, Южном Кавказе, Центральной Азии. Третья глава озаглавлена «Новые направления во внешней политике Турции»и состоит из двух подглав. В ней анализируются переосмыслениероли Южной и Западной Азии во внешней политике Турции, также инициативы Турции в Африке и Латинской Америке.

Содержание диссертации можно представить в следующих положениях:

- Причины перемен вовнешней политики Турции во время

нахождения у власти ПСР можно разделить на внешние и внутренние. Приобретение статуса кандидата в ЕС, европеизация внешней политики страны и энергетическая зависимость от соседних стран явились теми факторами, которые так или иначе оказали бы влияние на курс внешней политики Турции, независимо от идейных основ правящей партии. К внутренним причинам можно отнести укрепление позиций происламской или анатолийской буржуазии в ее интересах на превращение Турции в игрока, имеющего влияние в решении проблем глобального характера, а также исламистскую идентичность партии Справедливость и развитие.

- Идеология внешней политики ПСР кроется в происламской ориентации партии и нео-османском мировоззрении.
- Изменения во внешней политике Турции произошли и с возрастанием влияния таких акторов, как бизнес ассоциации, исследовательские центры, неправительственные организации.
. Во время нахождения у власти ПСР Турция начала вести переговоры с ЕС (2005г.). Основными мотивами углубления отношений были укрепление позиций власти внутри страны путем уменьшения роли Вооруженных сил и продвижения экономических интересов. При этом, после укрепления позиций власти и ослабления ВС, Турция стала все больше диверсифицировать свою внешнюю политику.
. Турецко-американские отношения в первом десятилетии правления ПСР можно охарактеризовать растущей самостоятельностью Турции. Причины этого кроются в отсутствии общих угроз, а также во взглядах лидеров ПСР, которые не видя угрозу в исламском экстремизме, а видят ее в последствиях войны США в Ираке, санкциях против Ирана, поддержке, оказываемой Вашингтоном курдам.
- На Ближнем Востоке Турцияпосле прихода власти ПСР ведет политику нео-османизма, суть которой состоит в стремлении стать лидером или гегемоном.Среди причин вовлечения Турции следует отметить идентичность и нео-османское мировоззрение ПСР. Немаловажную роль сыграли также экономические интересы анатолийской буржуазии, возрастающая энергетическая зависимость от стран региона и вакуум сил, который образовался после войны в Ираке. Турция стремится к гегемонии в регионе, используя опыт Османской империи. При этом Турция добивается этого посредством экономической интеграции, анти-израильской риторики, а также своего участия в качестве посредника.
- Нео-османское мировоззрение лидеров правящей партии отражается также и в политике, проводимой Турцией на Балканах. Турция стремится к гегемонии в регионе, используя посредничество между государствами и

негосударственными акторами.

На Южном Кавказе политика правящей партии в основном является продолжением политики, проводимой предшествующими властями. Во время российско-грузинской войны 2008 г., Турция выступила с предложением о создании «Пакта стабильности и безопасности Кавказа», сутью которого был раздел сфер влияния в регионе с Россией. Частью этой инициативы стала попытка нормализации отношений с Арменией. Однако, турецкие власти переоценили свои возможности и не сумели убедить Баку о пользе открытия границ с Арменией, а официальная Москва не была заинтересована в разделе сфер своего влияния в регионе. Таким образом, Турция вновь вернулась к прежней позиции и заключила Договор о стратегическом сотрудничестве с Азербайджаном.

- Зависимость Турции от российских энергоресурсов значительно смягчает позицию официальной Анкары по многим вопросам, явным доказательством тому является позиция Турции во время войны между Россией и Грузией в 2008 г. Однако, провал турецкой «Платформы» и события вокруг Сирии показывают, что торговое партнерство далеко не всегда способно устранить геополитические разногласия.
- Политика Турции в Центральной Азии в отличие от прошлого периода не основана на пантюркских планах. ПСР внесла корректировки в центральноазиатской политике: теперь официальная Анкара развивает отношения согласно экономическим и энергетическим интересам. С другой стороны, после промедления переговорного процесса с ЕС, Турция наладила диалог с Шанхайской организацией сотрудничества. Это доказывает, что турецкие лидеры рассматривают углубление связей в регионе в качестве укрепления глобальной мощи Турции.
- Правление ПСР в Турции открыло новую страницу в политике, проводимой страной на южно- и западно-азиатском направлениях. Китай и Индия выделяются в качестве важных торговых партнеров Турции. Новые интересы Турции привели к пересмотру политики поддержки этнических и религиозных братьев (уйгуров - в Китае и властей Пакистана в вопросе Кашмира).Турция выступила с инициативой сотрудничества на новых направлениях - в Африке и Латинской Америке. Движущей силой политики, проводимой в данных регионах являются геополитические интересы страны.

В приложении представляется переписка с зарубежными и турецкими экспертами.

Andranik Israyelyan

PECULARITIES OF THE FOREIGN POLICYOF THE REPUBLIC OF TURKEYINTHE FIRST DECADE OF GOVERNANCE OF THE JUSTICE AND DEVELOPMENT PARTY (2002-2012).

The Dissertation is submitted for pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "WORLD HISTORY" 07.00.02

The defense of the dissertation will take place at 15.00 on June13, 2013 at the Session of Specialized Council 006 «World History» acting at the Institute of Oriental Studies of NAS RA, Address: 0019, Yerevan.Marshal Baghramyan ave, 24/4.

Resume

The purpose of the study is the analysis of peculiarities of the foreign policy of the Republic of Turkey in the first decade of governance of the Justice and Development Party. The chronological framework of the dissertation covers from 2002 to 2012. The structure of the work serves the purposes and the basic tasks of the study and consists of introduction, two chapters, conclusion, bibliography and appendix. In the introduction the relevance of the study is substantiated, the main goals and objectives, the methodology and the brief description of used literature are presented and the practical importance of the dissertation is described.

The first chapter of the dissertation is entitled "Ideology and Peculiarities of the Foreign Policy of Justice and Development Party'' (JDP). The first chapter consists of three sub-chapters. First sub-chapter describes the general line of Turkish foreign policy before the election of JDP in 2002. Next sub-chapters analyse ideational bases of its foreign policy and peculiarities of formation and implementation of Turkish foreign policy under JDP.

The second chapter is entitled "Strategic and Tactical Changes in the Directions of Turkish Foreign Policy (2002-2012)". It consists of eight sub-chapters, each of which analyses new tendencies of Turkish policy towards the EU, the USA, Russia, Middle East, the Balkans, South Caucasus, Central Asia and "New directions''- South and East Asia, Africa and Latin America.

The content of the study is encompassed in the following provisions:

• The reasons behind changes in Turkish foreign policy are both internal and external. The candidate status of EU membership and Europeanization of Turkish foreign policy, energy dependence on neighborhood are the factors that would influence Turkish foreign policy regardless ideational bases of ruling party. Growth and consolidation of Islamist / Anatolian bourgeoisie, which has interest in global engagement of Turkey and islamist identity of JDP, are internal factors behind changes in foreign policy.

• Ideational basis of foreign policy of JDP is Islamic-centered and neo-ottoman vision.

• Among novelties of foreign policy formation and implementation in the first decade of governance of JDP one may distinguish the growing influence of new actors-business associations, think tanks, NGOs.

. During JDP governance Turkey made necessary progress towards EU standards so that in 2005 Negotiations were launched with EU. Driving forces to deepen relations with EU were the consolidation of power in domestic politics, through decreasing the role of country's armed forces and promoting economic interests. Along with this, Turkey has undertaken the further diversification of its foreign policy.

. In the first decade of governance of JDP Turkish-American relations were marked with growing independence of Turkey The reason behind this alienation is lack of common threat for Turkey and the US as well as the vision of JDP leaders. As opposed to the US, they do not perceive Islamic extremism as a threat but see the US war in Iraq, the sanctions against Iran, US assistance to Kurds.

. After the JDP came to power Turkey has been conducting policy of neo-ottomanism in the Middle East, which essence is to play a leading role or become a hegemon. Amongst the reasons of Turkish engagement should be mentioned the identity and neo-osmanic views of the JDP. Economic interests of Islamist bourgeoisie, growing energy dependence on the countries of the region, power vacuum after the Iraq war played not a minor role in Turkish engagement.Turkey seeks hegemony in the region by using its ottoman experience. Along with this, Turkey uses economic integration, anti-Israeli rhetoricand its role of a mediator as tools for achieving its goals.

. Neo-ottoman vision of Turkish leaders has its impact on the policy towards the Balkans as well Turkey seeks hegemony in the region making use of the mediation between states and non state actors.

• The policy of the leading party in the South Caucasus is a continuation of the policy, conducted by the ex-authorities of Turkey. During Russian-Georgian war Turkey put forward a suggestion of creating a "Caucasus stability and security

platform", which aimed at sharing of spheres of influence in the region with Russia. Armenian-Turkish rapprochement process was part of this initiative. However, Turkish authorities overestimated their capacity: they were not able to convince Baku of the advantages of the open borders with Armenia, Kremlin in its turn was reluctant in sharing its influence in the region.Thus,Turkey backtracked and signed a new treaty with Azerbaijan on strategic cooperation.

• Turkish-Russian relations are shaped mainly by energy politics, as due to energy supplies Russia has become a top trade partner of Turkey. Turkey's energy dependence on Russian energetic resources quite smoothes the stance of official Ankara toward Russia as it was evidenced in 2008 Russian-Georgian war. Failure of Turkey's proposal of Platform and the Syrian crisis, however, show that trade cooperation not always can reconcile geopolitical discrepancies.

• Turkish policy in the Central Asia is not based on pan-turkism unlike the previous decade. JDP has made changes in Turkish policy toward Central Asia. Currently Official Ankara develops its relations based on economic and energetic interests. The proof is that Turkey does not make efforts to mediate between Central Asian conflicts. On the other hand, after the slowdown in negotiations with the EU Turkey initiated formation of the first permanent body between Turkic nations- Turkic Council in 2009. Turkey also institutionalized her relations with Shanghai Cooperation Organisation. This means that Turkey views consolidation of its relations in Central Asia as serving its global might.

• JDP opened new horizons in Turkey's relations with South-East Asian nations. China and India are the main trade partners of Turkey. Along with these countries, Turkey seeks to cooperate with the rest of BRICS on the international arena. These made Turkey to reconsider its policy of backing its religious brothers - Pakistan and Uighurs in their disputes with India and China respectively. Turkey initiated also new openings in the Africa and Latin America. Driving forces of these openings are geopolitical interests. Turkey sees these new directions as a proof of her might. To ensure its advantages when resolving global problemsTurkey cooperates with new-rising states like South African Republic, Third and Forth world less developed countries' votes are important for Turkey while voting in the General Assembly of UN.

The appendix represents correspondence with foreign and Turkish experts.